Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի մայիսի 4-ի № 207Ն որոշմամբ

ՄԵԹՈԴԻԿԱ

Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման

1. Սույն մեթոդիկայի համաձայն հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող հետևյալ տեսակի կայաններից (այսուհետև՝ Կայաններ) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները.
   1) բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև ներառյալ 10 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով ամբողջությամբ, մասնակիորեն կամ համատեղության կարգով չեն օգտագործում այլ անձանց պատկանող հիդրոկառույցներ և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից (այսուհետև՝ Հանձնաժողով) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2004 թվականի փետրվարի 9-ից հետո.
   2) ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև ներառյալ 10 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրառն իրականացվում է ոռոգման համակարգերից և Հանձնաժողովից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո.
   3) խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև ներառյալ 10 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրառն իրականացվում է խմելու ջրատարներից և Հանձնաժողովից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2005 թվականի

նոյեմբերի 8-ից հետո՝ բացառությամբ խմելու ջրատարների վրա կառուցված այն փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց կառուցման լիցենզիան տրվել է մինչև 2005 թվականի նոյեմբերի 8-ը.

4) հողմային էլեկտրակայաններ, որոնք Հանձնաժողովից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2004 թվականի փետրվարի 9-ից հետո.

5) կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, որոնք Հանձնաժողովից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2003 թվականի սեպտեմբերի 9-ից հետո:

2. Սույն մեթոդիկայի համաձայն՝ սակագները հաշվարկվում են Հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում:

3. Հանձնաժողովը Կայաններից 2008 թվականի և դրան հաջորդող տարիների համար առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանում և վերանայում է հետևյալ հաշվարկային բանաձևով.

$$T = T_1\left[k_1\frac{PI}{100} + k_2\frac{ER_1}{ER_2} + \left(1 - k_1 - k_2\right)\right],$$

որտեղ՝

T - սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ).

T_1 - գործող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ).

k_1 - գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման սղաճի տեմպով և ընդունվում է հավասար 0,25-ի.

PI - ընթացիկ տարվա սեպտեմբեր ամվա սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ.

k_2 - գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխությամբ և ընդունվում է հավասար 0,35-ի.

ER_1- ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքների միջին թվաբանական մեծությունն է.

ER_2- ընթացիկ տարվան նախորդող տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքների միջին թվաբանական մեծությունն է.

4. Սակագների վերանայումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը: Վերանայման արդյունքում սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից, իսկ Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի գործողության ժամկետի 6 ամիսը լրացած չլինելու դեպքում վերանայման արդյունքում սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում սակագնի գործողության ժամկետի 6 ամիսը լրանալուց հետո:
5. Եթե էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի հայտ ներկայացրած անձանց Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագնի սահմանման մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը, ապա սահմանվող սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվա հունվարի 1-ից այդօրինակ Կայանների համար գործող սակագնի մեծությանը հավասար: Իսկ եթե էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի հայտ ներկայացրած անձանց Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագնի սահմանման մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, ապա սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից այդօրինակ Կայանների համար գործող սակագնի մեծությանը հավասար:
6. Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի գործող սակագները Հանձնաժողովի կողմից վերանայվում և ուժի մեջ են մտնում 2008 թվականի հունվարի 1-ից: Ընդ որում, 2008 թվականի համար Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների սահմանման ժամանակ գործող սակագների մեծությունները (T_1) ընդունվում են սույն որոշման 2-րդ կետով սահմանված սակագների մեծություններին հավասար: